

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԾՁԲ-20-4/3-7**

ք. Երևան

«03» 04.2020թ.

«Վաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յուլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ. Նիկողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման մասաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 7500000 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝

ՎԳ=ՄԳ/ԼԳxԾxԲ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է:

3-րդ չափաբաժնի համար՝ 12800000 ՀՀ դրամ,

4-րդ չափաբաժնի համար՝ 27281071 ՀՀ դրամ,

ԼԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված միավոր գների հանրագումարն է:

3-րդ չափաբաժնի համար՝ 11100000 ՀՀ դրամ,

4-րդ չափաբաժնի համար՝ 26682761 ՀՀ դրամ,

Ծ-ն մատուցված ծառայության միավորի գինն է:

Բ-ն մատուցված ծառայության քանակն է:

#### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում

նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱՓՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.14 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՁՈւ սպառազինության վարչությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն  
ՀՀ, ք. Երևան Բագրևանդի 5,  
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն  
Հ/հ 900011144079  
ՀՎՀՀ 02522157  
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ս. ՅՈՒՂՅԱՆ

### ԿԱՏԱՐՈՂ

«Գարանտսերվիս» ՍՊԸ  
ՀՀ, ք. Երևան, Թժիվիյան խճ. 20  
«Կոնվերսբանկ» ՓԲԸ  
Հ/Կ 193004674290  
ՀՎՀՀ 00840437

Տնօրեն՝

Մ. Նիկողոսյան

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***  
**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

1. Կատարողի կողմից պետք է տրվի երաշխիք փոխարինված պահեստամասերի համար 6 ամիս կամ 10000 կմ:
2. Հիմնական նորոգում անցած ագրեգատների(շարժիչ,փոխանցումների տուփ, բաժանարար տուփ,կամրջակներ) շահագործման երաշխիքային ժամկետը՝ 12 ամիս կամ 50000 կմ:
3. Ծառայությունը մատուցվում է ըստ հայտերի: Հայտի թույլտվությունը ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլայի ծառայության կողմից էլեկտրոնային տարբերակով տրվում է ծառայությունը մատուցողին:  
Առանձին դեպքերում ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլայի ծառայության կողմից կարող է տրվել բանավոր թույլտվություն , որը պետք է հետագայում ձևակերպել գրավոր ձևով: Մինչև սպասարկելն ու նորոգելը ծառայությունը մատուցողի և 14746 զորամասի ներկայացուցչի կողմից կազմել արատավորման նախնական զննման ակտ կազմակերպության տնօրենի, վարորդի, ՀՀ ՊՆ 14746 զորամասի ներկայացուցչի և ՀՀ ՊՆ 14746 զորամասի իրամանատարի ստորագրությամբ և կնիքով, որից հետո երեք օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայություն:
- Ծառայությունը պետք է մատուցվի (մեքենան նորոգվի)մեքենան նորոգման հանձնելու պահից 7 օր ներառյալ արատավորման աշխատանքները, որից հետո կազմել կատարողական ակտ վերոնշյալ անձանց ստորագրություններով, կնիքով և ներկայացնել ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայություն: Ձորքերից նորոգման ենթակա տեխնիկայի փաստաթղթերը ստորագրվում է նաև գորքերի ներկայացուցչի կողմից:
4. Ծառայության մատուցման ընթացքում օգտագործվող բոլոր տեսակի պահեստամասերի, քսայուղերի, ներկերի և այլ նյութերի ապահովումն իրականացվում է ծառայությունը մատուցողի կողմից:
- 5.Միներալ յուղի շահագործման նվազագույն վազքը ոչ պակաս 6000 կմ.
- 6.Սինթետիկ յուղի շահագործման նվազագույն վազքը ոչ պակաս 10000 կմ.
- 7.Կիսասինթետիկ յուղի շահագործման նվազագույն վազքը ոչ պակաս 8000 կմ.
8. Փոխարինված ագրեգատները և պահեստամասերը պետք է հանձնվեն ՀՀ ՊՆ 14746 զորամաս (ընդունումը և տեղափոխումը զորամասի ուժերով):

**ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Ծառայության				
Հ/Հ	Ձ/հ	անվանումը	Ընդհանուր առավելագույն գումարը (ՀՀ դրամ)	Մատուցման ժամանակացույց
1	3	KIA SERATO	4000000	Ծառայությունների մատուցումը կիրականացվի 2020թ. համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի /ը/ պարբերության պահանջները:
2	4	HUNDAI ELANTRA	3500000	

**Մեծ ծավալի պարճառով ապրանքների և ծառայությունների միավորի գները ներկայացված են կից Հավելված 1-ով:**


**ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

ՀՀ դրամ

Հ/Հ	Ձ/հ	Գնման ենթակա ծառայությունների անվանումը	CPY կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
1	3	KIA SERATO	50111130/531/9/1	
2	4	HUNDAI ELANTRA	50111130/541/9/1	


**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն  
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

  
Ն. ԅՈՒԶՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Գարանտերվիս» ՍՊԸ տնօրեն

  
Մ. ՆԻԿՈՍՅԱՆ

Հավելված 1

Հ/հ	Ընթացիկ միջին և հիմնական նորագնաց աշխատանքների անվանումները	KIA SERATO	HUNDAI ELANTRA
		Մեկ միավորի գինը ՀՀ դրամ	Մեկ միավորի գինը ՀՀ դրամ
1	Բռնկման համակարգի ստուգում	անվճար	անվճար
2	Կցորդման համակարգի ստուգում	անվճար	անվճար
3	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	անվճար	անվճար
4	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	անվճար	անվճար
5	ABS համակարգի ստուգում	անվճար	անվճար
6	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	անվճար	անվճար
7	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	անվճար	անվճար
8	Շարժիչի համում և տեղադրում	80000	80000
9	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	170000	170000
10	Շարժիչի գլխիկի համում տեղադրում միջադիրի փոխարինումով	60000	60000
11	Շարժիչի գլխիկի նորագում, եռակցում հղկումով	60000	60000
12	Շարժիչի գլխիկի փակամների փոխարինում հղկումով	2000	2000
13	Վառարկի մտի բնիկի նորագում	10000	10000
14	Շարժիչի փակամների զստանակների փոխարինում	100	100
15	Փակամների խզուկների փոխարինում 1 կ-տ	60000	60000
16	Հրիմների կամ եխորոնիների փոխարինում 1 կ-տ	20000	20000
17	Շարժիչի մխագաղտերի, հիմնական և շարժաքևի ներդրակների փոխարինում	50000	50000
18	Ծնկամ և լիսեռի հղկում	10000	10000
19	Ծնկամ և լիսեռի փոխարինում	10000	10000
20	Ծնկամ և լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	10000	10000
21	Ծնկամ և լիսեռի արտամանակի փոխարինում	50000	50000
22	Ծնկամ և լիսեռի ուղղում	40000	40000
23	Ծնկամ և լիսեռի աջակ խզուկի փոխարինում	30000	30000
24	Ծնկամ և լիսեռի հետևի խզուկի փոխարինում	70000	70000
25	Շարժիչի բլեկի փոխարինում	100000	100000
26	Շարժիչի գլանի փոխարինում 1 հպտ	50000	50000
27	Շարժիչի բլեկի հղկում	10000	10000
28	Մխոցի փոխարինում 1 հատ	100	100
29	Բաշխիչ լիսեռի համում և տեղադրում կամ փոխարինում	500	500
30	Բաշխիչ լիսեռի ակաեռզների համում և տեղադրում կամ փոխարինում	500	500
31	Բաշխիչ լիսեռի խառարուկի փոխարինում	500	500
32	Փոկանիկի փոխարինում	5000	5000
33	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	0	0
34	Շարժիչի շրթալի փոխարինում	72000	72000
35	Յուղի մղիչի շրթալի փոխարինում	10000	10000
36	Շարժիչի վանոսների փոխարինում	15000	15000
37	Շարժիչի քարտերի նորագում (եռակցում)	20000	20000
38	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	10000	10000
39	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	20000	20000
40	Շարժիչի քարտերի համում, տեղադրում մաքրումով	20000	20000
41	Շարժիչի լուղի մղիչի փոխարինում	20000	10000
42	Շարժիչի լուղի մղիչի նորագում, մաքրում	30000	30000
43	Շարժիչի լուղի մղիչի մաքրում	20000	20000
44	Շարժիչի լուղի մղիչի կարգավորում	5000	5000
45	Յուղի մղիչի բաթիկի փոխարինում	5000	5000
46	Յուղի ծորակի փոխարինում	1000	1000
47	Օդարաշակ փոքրակի փոխարինում	2000	2000
48	Շարժիչի կոմպրեսորի փոխարինում (տուրբոմոդի)	0	0
49	Շարժիչի վառարկի քարձր ճնշման մղիչի փոխարինում	0	0
50	Շարժիչի քարձիկի համում և տեղադրում կամ փոխարինում	8000	8000
51	Բլիսեռի կախարիչի համում և տեղադրում կամ փոխարինում	1000	1000
52	Ուղղորդիչ վանճեռի փոխարինում	1000	1000
53	Թափանիկի համում և տեղադրում կամ փոխարինում	60000	60000
54	Շարժիչի կախարիչի փոխարինում	20000	20000
55	Շարժիչի կախարիչի միջադիրի փոխարինում	20000	20000
56	Մխոցամատի փոխարինում	10000	10000
57	Շարժիչի շարժաքևի փոխարինում	5000	5000
58	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	1000	1000
59	Շարժիչի քաշիչի լիսեռի երկբակի փոխարինում	1000	1000
60	Աղամնանիկի փոխարինում	1000	1000
61	Աղամնանիկի փոկի փոխարինում	0	0
62	Աղամնանիկի փոկի պատյանի փոխարինում	5000	5000
63	Աղամնանիկի փոխարինում	1000	1000
64	Շարժիչի կախարիչի փոխարինում	5000	5000
65	Շարժիչի համադրարիչի փոխարինում	5000	5000
66	Շարժիչի փոկի եղունակի փոխարինում	5000	5000
67	Շարժիչի հղղվակի առանցքակալի փոխարինում	5500	5500
68	Շարժիչի աջակի կախարիչի փոխարինում, համում, տեղադրում միջադիրի փոխարինումով	15000	15000
69	Շարժիչի լուղի արանքալիսի (ուղղ) իրանի փոխարինում	5000	5000
70	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	5000	5000
71	Շարժիչի փոկի ձգիչի նորագում	5000	5000
72	Շարժիչի գամանեղի փոխարինում	100	100
73	Շարժիչի գամանեղի փոխարինում բնիկի նորագումով	10000	10000
74	Գլխիկի հեղուլի փոխարինում	1000	1000

75	Ծնված և լիցենզիա հետևող փոխարինում	500	500
76	Շարժիչի էլեկտրակայան համակարգի համույժ տեղադրում	10000	10000
77	Շարժիչի վառելիքի սնման համակարգի համույժ տեղադրում	5000	5000
78	Յուղի և լույսի գտնիչի փոխարինում	500	500
79	Ավտոմեքենայի լույսում	2000	2000
80	Համակարգչային ախտորոշում, թերաթույնների վերագմանք	10000	10000
81	Յուղի ռադիատորի փոխարինում	10000	10000
82	Յուղի ռադիատորի նորոգում	15000	15000
83	Յուղի գտնիչի փակահի փոխարինում	1000	1000
84	Արտածման կալեկտորի համույժ և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
85	Արտածման կալեկտորի համույժ և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
86	Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում	5000	5000
87	Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում	5000	5000
88	Վառելիքի փոխարինում փոխարինում	5000	5000
89	Վառելիքի մոտի փոխարինում I կ-տ	2000	2000
90	Վառելիքի մուտք մաքրման գտնիչի փոխարինում	5000	5000
91	Օդի գտնիչի փոխարինում	500	500
92	Կոնդիցիոների գտնիչի փոխարինում	2000	2000
93	Օդի ծախսաչափիչի համույժ և տեղադրում կամ փոխարինում	3000	3000
94	Օդի ծախսաչափիչի փոխարինում համույժ և տեղադրում	1000	1000
95	Օդի գտնիչի փոխարինում համույժ և տեղադրում	1000	1000
96	Օդաբաշի փոխարինում համույժ և տեղադրում	1000	1000
97	Ավտոմատ փոխանցման տռափի ղեկավարման բլոկի համույժ և տեղադրում կամ փոխարինում	20000	20000
98	Ինժեկտորի բոլորմեքենայի փոխարինում I կ-տ	20000	20000
99	Ինժեկտորի բոլորմեքենայի մաքրում	30000	30000
100	Բոլորմեքենայի կոդավորում	0	0
101	Ինժեկտորի բոլորմեքենայի հատարման փոխարինում	10000	10000
102	Բենզոլիչի փոխարինում	8000	8000
103	Վառելիքի կոչի մաքրման գտնիչի փոխարինում	8000	8000
104	Վառելիքի կոչի կոդավորում համույժ և տեղադրում կամ փոխարինում	3000	3000
105	Բենզոլիչի կառավարում	3000	3000
106	CO կարգավորում	3000	3000
107	Ղեկավարման քրեի համույժ և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
108	Ղեկավարման քրեի վերանորոգում	35000	35000
109	Վառելիքի բաքի համույժ և տեղադրում կամ փոխարինում	10000	10000
110	Վառելիքի բաքի մաքրում	15000	15000
111	Արագարարի ռոնակի փոխարինում	5000	5000
112	Արագարարի ռոնակի տվիչի փոխարինում	3000	3000
113	Օդի ծախսի տվիչի փոխարինում	2000	2000
114	Տրամբլի համույժ և տեղադրում կամ փոխարինում	0	0
115	Տրամբլի վերանորոգում	0	0
116	Ձրի ցերմատիցմանի տվիչի փոխարինում	1000	1000
117	Ձրի հառոմակի, փոխարինում փոխարինում	3000	3000
118	Բենզոլիչի բենզոլիչի գանգի փոխարինում	5000	5000
119	Բենզոլիչի բենզոլիչի գանգի մաքրում	1000	1000
120	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	2000	2000
121	Տվիչի փոխարինում	1000	1000
122	Հովիտի փոխարինում	5000	5000
123	Հովիտի փոխի համույժ և տեղադրում կամ փոխարինում	3000	3000
124	Ռադիատորի համույժ և տեղադրում կամ փոխարինում	12000	12000
125	Ռադիատորի շրջանակի փոխարինում	2000	2000
126	Շերտախեղկի փոխարինում	5000	5000
127	Շերտախեղկի կառավարման ձգածողի փոխարինում	5000	5000
128	Ռադիատորի կառավարիչի փոխարինում	2000	2000
129	Ռադիատորի փոխարինում փոխարինում	1000	1000
130	Կոնդիցիոների կոմպրեսորի համույժ և տեղադրում կամ փոխարինում	18000	18000
131	Կոնդիցիոների կոմպրեսորի համույժ և տեղադրում կամ փոխարինում	3000	3000
132	Կոնդիցիոների առանցքային փոխարինում	12000	12000
133	Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում	12000	12000
134	Կոնդիցիոների ռադիատորի նորոգում	20000	20000
135	Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում	60000	60000
136	Ընդարձակող բաքի փոխարինում	3000	3000
137	Ընդարձակող բաքի փոխարինում փոխարինում	2000	2000
138	Ձրի ծորակի փոխարինում	3000	3000
139	Հովիտիցման հիդրոկցիոնի փոխարինում	3000	3000
140	Հովիտիցման համակարգի ղեկավարի փոխարինում	1000	1000
141	Հովիտի շարժիչի համույժ և տեղադրում կամ փոխարինում	3000	3000
142	Հովիտի ղեկավարի համույժ և տեղադրում կամ փոխարինում	500	500
143	Վառարանի ռադիատորի փոխարինում, քոչի աշխատանքները ընդգրկված	55000	55000
144	Վառարանի ռադիատորի նորոգում	50000	50000
145	Վառարանի շարժիչի փոխարինում	12000	12000
146	Թերմոստատի փոխարինում	8000	8000
147	Ձրի մոխի փոխարինում միջադիրով	20000	20000
148	Ձրի մոխի միջադիրի փոխարինում	1000	1000
149	Գեներատորի փոխի փոխարինում	3000	3000
150	Գեներատորի փոխի ձգող հոլովակի փոխարինում	5000	5000
151	Ձրի ռադիատորի վերանորոգում	70000	70000
152	Թերմոստատի միջադիրի փոխարինում	1000	1000
153	Սառնեցման համակարգի օդափակում	1000	1000
154	Խառարանի գոծրային փոխարինում	11000	11000
155	Կառարանի ղեկավարի համույժ	15000	15000
156	Խառարանի կառարանի ղեկավարի փոխարինում	3000	3000

157	խրատարի համում և տեղադրում կամ փոխարինում	6000	6000
158	խրատարի 1 կամ խտրովանի փոխարինում	3500	3500
159	խրատարի անուրի (xamyr) փոխարինում	500	500
160	խրատարի մերոնի փոխարինում	2500	2500
161	խրատարի կախոցի փոխարինում	600	600
162	կառավարի փոխարինում	100	100
163	Ռեզոնատորի փոխարինում	16000	16000
164	Հովազման հեղուկի փոխարինում	4000	4000
165	Աշխատանքային կամ գլխ. գլանի համում և տեղադրում կամ փոխարինում	6000	0
166	Աշխատանքային կամ գլխ. գլանի հիմնական նորոգում մերատալ պաշտամքները	10000	0
167	Կգործման սկավառակների և առանցքակալի փոխարինում	30000	0
168	Կգործման ոտնակի համում և տեղադրում կամ փոխարինում	5000	0
169	Կգործման ճակատի համում և տեղադրում կամ փոխարինում	5000	0
170	Կգործման վերջնական համում և տեղադրում կամ փոխարինում	3000	0
171	Կգործման երկվանդի փոխարինում	2000	0
172	ՓՏ-ի հիմնական նորոգում, մերատալ բոլոր պաշտամքները	70000	0
173	ՓՏ-ի համալրումի փոխարինում	70000	0
174	ՓՏ-ի փոխարինում	25000	0
175	ՓՏ-ի առջևի խառնուրդի փոխարինում	10000	10000
176	ՓՏ-ի հետևի խառնուրդի փոխարինում	10000	10000
177	ՓՏ-ի համաձայնի փոխարինում	1000	0
178	ՓՏ-ի և ԱՓՏ-ի համում և տեղադրում	55000	55000
179	ՓՏ-ի բուխում, արտավորում, հավաքում	25000	25000
180	ՓՏ-ի պատանի համում և տեղադրում կամ փոխարինում	28000	28000
181	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	10000	10000
182	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	1000	0
183	ՓՏ-ի առավանդի փոխարինում	1000	1000
184	ՓՏ-ի առանցքակալի լիսեռի փոխարինում	1000	0
185	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	1000	0
186	ՓՏ-ի փոխարինման մեխանիզմի փոխարինում	2500	0
187	ՓՏ-ի փոխարինման մեխանիզմի վերանորոգում	10000	0
188	ՓՏ-ի բարձրիկի փոխարինում	5000	5000
189	ՓՏ-ի փոխարինման լիսեռի փոխարինում	5000	0
190	ՓՏ-ի լույսի փոխարինում	2500	2500
191	Վագրաչափի շարժարկի փոխարինում	5000	5000
192	ԱՓՏ-ի հիմնական նորոգում, մերատալ բոլոր պաշտամքները	210000	210000
193	ԱՓՏ-ի հավաքումի փոխարինում	53000	53000
194	ԱՓՏ-ի փոխարինում	80000	80000
195	ԱՓՏ-ի առավանդի փոխարինում	10000	10000
196	ԱՓՏ-ի կոնվերտերի համում և տեղադրում կամ փոխարինում	100	100
197	ԱՓՏ-ի ամուր սկավառակի փոխարինում	40000	40000
198	ԱՓՏ-ի կգործման գլխավոր գլանի կառուցման փոխարինում	20000	20000
199	ԱՓՏ-ի առանցքակալի փոխարինում	40000	40000
200	ԱՓՏ-ի համակարգի և առանցքակալի փոխարինում	40000	40000
201	ԱՓՏ-ի լույսի մոլի փոխարինում	10000	10000
202	ԱՓՏ-ի լույսի մոլի խառնուրդի փոխարինում	10000	10000
203	ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում	40000	40000
204	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում	5000	5000
205	ԱՓՏ-ի հիդրոագուցի փոխարինում	32000	32000
206	ԱՓՏ-ի լույսի գոտիի փոխարինում	12000	12000
207	ԱՓՏ-ի լույսի փոխարինում	5000	5000
208	ԱՓՏ-ի գոտիի վազում, մարում՝ բարտեռի համում և տեղադրում	20000	20000
209	Բաշխի տուփի հիմնական նորոգում, մերատալ բոլոր պաշտամքները	0	0
210	Բաշխի տուփի համում և տեղադրում կամ փոխարինում	0	0
211	Բաշխի տուփի բանդում և արտավորում, հավաքում	0	0
212	Բաշխի տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	0	0
213	Բաշխի տուփի ամուր փոխանցման մեխանիզմի փոխարինում	0	0
214	Բաշխի տուփի ռիաֆրակտների փոխարինում	0	0
215	Բաշխի տուփի շարժարկի փոխարինում	0	0
216	Բաշխի տուփի զիֆերենցիայի փոխարինում	0	0
217	Բաշխի տուփի միջանկյալ լիսեռի փոխարինում	0	0
218	Բաշխի տուփի առանցքային լիսեռի փոխարինում	0	0
219	Բաշխի տուփի երկվանդի փոխարինում	0	0
220	Բաշխի տուփի բարձրիկի փոխարինում	0	0
221	Բաշխի տուփի խառնուրդի փոխարինում	0	0
222	Բաշխի տուփի առանցքակալի փոխարինում	0	0
223	Կարդանային լիսեռի համում և տեղադրում կամ փոխարինում	0	0
224	Կարդանային լիսեռի խառնուրդի փոխարինում	0	0
225	Բաշխի տուփի կարմանակի համում և տեղադրում կամ փոխարինում	0	0
226	Տվյալի փոխարինում	0	0
227	Բաշխի լիսեռի առանցքակալի փոխարինում	0	0
228	Կարդանային լիսեռի միջ. կախոցի համում և տեղադրում կամ փոխարինում	0	0
229	Բաշխի տուփի շրջանի փոխարինում	0	0
230	Առջևի կամրջակի համում և տեղադրում կամ փոխարինում	0	0
231	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ներուկտոր)քանդում, արտավորում և հավաքում	0	0
232	Առջևի կամրջակի կիսատնու համում և տեղադրում կամ փոխարինում	0	0
233	Առջևի կամրջակի կիսատնու առանցքակալի փոխարինում	0	0
234	Առջևի կամրջակի կիսատնու առանցքակալի խառնուրդի փոխարինում	0	0
235	Կամրջակի լույսի փոխարինում	0	0
236	Առջևի կամրջակի բոլորի գնդած. հենարանի համում և տեղադրում կամ փոխարինում	0	0
237	Առջևի կամրջակի բոլորի գնդած. հենարանի նորոգում	0	0

238	Արջերի կամրջակի տվյալի փոխարինում	0	0
239	Արջերի կամրջակի գիծերեմցիայի փոխարինում	0	0
240	Հետևի կամրջակի համուսնի և տեղադրում կամ փոխարինում	0	0
241	Հետևի կամրջակի ինկալար քանդում, արատավորում և հավաքում	0	0
242	Հետևի կամրջակի մասնակի քանդում, արատավորում և հավաքում	0	0
243	Հետևի կամրջակի կիսապոստի համուսնի և տեղադրում կամ փոխարինում	0	0
244	Հետևի կամրջակի կիսապոստի արտաքին փոխարինում	0	0
245	Հետևի կամրջակի կիսապոստի արտաքին փոխարինում	0	0
246	Հետևի կամրջակի բուռնցրի գնդածև հեմարամի համուսնի և տեղադրում կամ փոխարինում	0	0
247	Հետևի կամրջակի ռիճերեմցիայի փոխարինում	0	0
248	Հետևի կամրջակի քրկավորում և համակարգի նորոգում	0	0
249	Կամրջակի տվյալի փոխարինում	0	0
250	Կամրջակի իրանի փոխարինում (չսրոկ)	0	0
251	Կամրջակի լուրի փոխարինում	40000	40000
252	Տրավերի համուսնի և տեղադրում կամ փոխարինում	2000	2000
253	Չախ կամ այ հողակալի համուսնի և տեղադրում կամ փոխարինում	40000	40000
254	Արջերի ամբակումի տարանջրակայի փոխարինում	15000	15000
255	Արջերի ամբակումի համուսնի և տեղադրում կամ փոխարինում	12000	12000
256	Հետևի ամբակումի համուսնի և տեղադրում կամ փոխարինում	12000	12000
257	Հետևի ամբակումի արտաքին փոխարինում	12000	12000
258	Ամբակումի գամառեղի և հեղուկի փոխարինում(մեկ ամիսի համար)	12000	12000
259	Չախ կամ այ հողակալի հատկությունների փոխարինում	5000	5000
260	Յնգամեղիչի քապակի փոխարինում	5000	5000
261	Արջերի գալանակի փոխարինում	5000	5000
262	Արջերի գնգամեղիչի համուսնի և տեղադրում կամ փոխարինում	10000	10000
263	Պնկեմեղիչի փոխարինում	8000	8000
264	Պնկեմեղիչի քապակի փոխարինում	0	0
265	Հարմարամեղիչի փոխարինում	0	0
266	Ներքևի լծակի կամուսնի և տեղադրում կամ փոխարինում	3000	3000
267	Ներքևի լծակի վրանների փոխարինում I հատ	15000	15000
268	Ներքևի լծակի հեղուկի փոխարինում	15000	15000
269	Հարմարամեղիչի (քառակի փոխարինում)	10000	10000
270	Ամբակումի պարտապահի փոխարինում	6000	6000
271	Շարժիչի պարտապահի փոխարինում	3000	3000
272	Վերևի լծակի կամուսնի և տեղադրում կամ փոխարինում	3000	3000
273	Վերևի լծակի վրանների փոխարինում I հատ	10000	10000
274	Վերևի լծակի հեղուկի փոխարինում	10000	10000
275	Հետևի վերևի լծակի վրանի փոխարինում I հատ	10000	10000
276	Գնդե հողակալի պարտապահի փոխարինում	3000	3000
277	Գնդե հողակալի փոխարինում	100	100
278	Գնդե հողակալի նորոգում	6000	6000
279	Արջերի կարմրաքարի համուսնի և տեղադրում կամ փոխարինում	15000	15000
280	Արջերի կարմրաքարի վրանների փոխարինում	7000	7000
281	Արջերի կարմրաքարի կարմրակի փոխարինում	4000	4000
282	Արջերի կարմրաքարի կարմրակի փոխարինում	4000	4000
283	Հետևի կարմրաքարի ամբակումի կարգավորում	4000	4000
284	Հետևի կարմրաքարի վրանների փոխարինում I հատ	5000	5000
285	Հետևի կարմրաքարի կարմրակի փոխարինում	4000	4000
286	Հետևի կարմրաքարի կարմրակի փոխարինում	4000	4000
287	Հետևի գալանակների փոխարինում	1000	1000
288	Հետևի ծգածողի համուսնի և տեղադրում կամ փոխարինում	8000	8000
289	Հետևի ամբակումի լծակի համուսնի և տեղադրում կամ փոխարինում	10000	10000
290	Չապակի փոխարինում	5000	5000
291	Չապակի վրանների փոխարինում I հատ	5500	5500
292	Հետևի գնգամեղիչի փոխարինում	2500	2500
293	Հետևի հարմարամեղիչի փոխարինում	7000	7000
294	Հետևի կարմրաքարի արտաքին փոխարինում	2500	2500
295	Ամբակումի լծակի վրանների փոխարինում	5500	5500
296	Ղեկավարումակի(կոտորակ) հիմնական նորոգում, ներառյալ քարա աշխատանքները	7000	7000
297	Ղեկավարումակի(կոտորակ) արտաքին փոխարինում	50000	50000
298	Ղեկավարումակի(կոտորակ) արտաքին փոխարինում	5000	5000
299	Ղեկավարումակի(կոտորակ) կարմրակի փոխարինում	5000	5000
300	Ղեկավարումակի(կոտորակ) վերանորոգման հավաքածուի փոխարինում	5000	5000
301	Ղեկավարումակի(կոտորակ) քանդում, արատավորում, հավաքում	15000	15000
302	Ղեկավարումակի(կոտորակ) կարգավորում	15000	15000
303	Ղեկավարումակի մեխանիզմի ազդանշանի փոխարինում	3000	3000
304	Ղեկավարումակի մեխանիզմի ժապավենի փոխարինում	5000	5000
305	Ղեկավարումակի մեխանիզմի փոխակերպիչների հավաքածուի փոխարինում	10000	10000
306	Ղեկավարումակի մեխանիզմի փոխակերպիչների հավաքածուի նորոգում	10000	10000
307	Ղեկավարումակի արտաքին փոխարինում	8000	8000
308	Ղեկավարումակի մեխանիզմի փոխարինում	5000	5000
309	Ղեկավարումակի մեխանիզմի փակարկի և հավաքածուի մեխանիզմի փոխարինում	8000	8000
310	Ղեկավարումակի մեխանիզմի փակարկի և հավաքածուի մեխանիզմի փոխարինում	12000	12000
311	Ղեկավարումակի մեխանիզմի փակարկի և հավաքածուի մեխանիզմի փոխարինում	3000	3000
312	Ղեկավարումակի մեխանիզմի փակարկի և հավաքածուի մեխանիզմի փոխարինում	10000	10000
313	Ղեկավարումակի մեխանիզմի մեխանիզմի փոխարինում	8000	8000
314	Ղեկավարումակի մեխանիզմի մեխանիզմի փոխարինում	8000	8000
315	Վերին կարմրաքարի կամ վրանների փոխարինում	16000	16000
316	Վերին կարմրաքարի կարգավորիչի փոխարինում	0	0
317	Վերին կարմրաքարի նորոգում և հավաքում փոխարինում	15000	15000
318	Վերին կարմրաքարի համուսնի և տեղադրում կամ փոխարինում	0	0
319	Հիդրոտեխարարի մեխանիզմի փոխարինում	5500	5500
		11000	11000

320	Հիդրոտեղարարի մոնիտինգի հիմնական նորոգում, Ֆերատյալ աշխատանքներ		
321	Հիդրոտեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	21000	21000
322	Հիդրոտեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	2500	2500
323	Հիդրոտեղարարի գածը ճնշման խողովակի փոխարինում	5000	5000
324	Հիդրոտեղարարի վերաբերյալ հավաքածուի փոխարինում	3000	3000
325	Ղեկավարի ձգանդի հանում և տեղադրում կամ փոխարինում	8000	8000
326	Ղեկավարի ձգանդի հողակալի նորոգում	5500	5500
